Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N4

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻ

քաղաք Երևան

Մասնակցում էին՝

Վահան Քերոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար (ենթախորհրդի նախագահ)
Անդրանիկ Ալեքսանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ
Ռուբեն Օսիպյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Գևորգ Պողոսյան	Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Իզաբելա Հովհաննիսյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դիանա Հարությունյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դավիթ Աղաջանյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Հռիփսիմե Հովհաննիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը: Նախարարը ողջունեց մասնակիցներին և ընդգծեց նմանատիպ ձևաչափով պարբերական հադիպումների կարևորությունը ՓՄՁ ոլորտին աջակցության քաղաքականության մշակման համար: Նախարարը, շեշտադրելով հարթակի հետևողական աշխատանքը, նշեց նաև ապագայում նախատեսվող ոլորտի զարգացմանը միտված համատեղ գործողությունների վերհանման և ծրագրերի իրականացման տեսլականը:

Գևորգ Պողոսյանն ամփոփեց նախորդ նիստի արդյունքում քննարկման առաջարկված և կարգավորում ստացած հարցերը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Գործարարության աջակցման գրասենյակին՝ սույն թվականի հոկտեմբերին հարցում անել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ՓՄՁ պետական գնումների մասնակցության դինամիկան պարզելու նպատակով:

Նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝

նախարարի ստորագրմանը ներկայացնել վճարումները կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի փաթեթը շրջանառելու մասին նամակի նախագիծը.

պատրաստել նամակ ՀՀ փոխվարչապետներին՝ դրոշմապիտակների մասով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագծին ընթացք տալու համար:

Գործարարության աջակցման գրասենյակին՝ ուսումնասիրել թե ներկայումս ինչ առաջարկություններ ունեն Հայփոստին մրցակից կազմակերպությունները և ինչ ազդեցություն է ունեցել նրանց գործունեության վրա Հայփոստի կողմից գների բարձրացումը:

Նախարարը ներկայացրեց իր նկատառումները այս ձևաչափով հանդիպումների առավել արդյունավետ օգտագործման և ՓՄՁ զարգացման ծրագրեր վերհանելու անհրաժեշտության վերաբերյալ:

Որոշվեց՝

Խորհրդի քարտուղարությանը՝

կազմակերպել ՓՄՁ զարգացման ենթախորհրդի հանդիպում առնվազն ամիսը մեկ անգամ՝ ինչպես սահմանված է ՓՄՁ զարգացման խորհրդի և ենթախորհրդի գործունեության կարգով.

ենթախորհրդի աշխատանքներին ներգրավել նաև շահագրգիռ ոլորտային նախարարությունների ներկայացուցիչներին՝ նախարարների տեղակալների մակարդակով:

Գործարարության աջակցման գրասենյակին՝ նախարարության գործընկերների հետ վերանայել ՓՄՁ զարգացման ռազմավարությունը և առաջարկել նոր գործողություններ:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

ՀԱՐՑ 1. ԴԱՀԿ ԿՈՂՄԻՑ ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Իզաբելա Հովհաննիսյանի ներկայացմամբ քննարկվեց մասնավոր հատվածի կողմից մտահոգություն առաջացրած ԴԱՀԿ կողմից ՓՄՁ սուբյեկտների պարտավորությունների վերադարձի գործիքակազմի բարելավման և հստակեցման հարցը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Գործարարության աջակցման գրասենյակին՝ իրականացնել թվերով հիմնավորված վերլուծություն, մասնավորապես՝ վերհանել ԴԱՀԿ–ում ընդգրկված ՓՄՁ սուբյեկտների քանակը և կալանք դրված գումարների չափը և առաջարկել հարցը լուծող տարբերակներ (ժամկետ՝ 1 ամիս):

ՀԱՐՑ 2. ՊԱՏՇԱՃ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԱՉԱՓԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Իզաբելա Հովհաննիսյանը ներկայացրեց պատշաճ ծանուցման միասնական ձևաչափի մշակման անհրաժեշտության հարցը: Առաջարկվեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պատվիրված նամակով իրականացնել տնտեսվարողների բոլոր հասցեներով (գործունեության հասցե, գրանցված հասցե) պատշաճ ձևով ծանուցում, չստացվելու դեպքում միայն տեղադրել ազդարարում:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ ուսումնասիրել ծանուցման վերաբերյալ համապատասխան իրավական կարգավորումները և ներկայացնել առաջարկություններ՝ դրանց միասնական ձևաչափի մշակման համար (ժամկետ՝ 1 ամիս):

ՀԱՐՑ 3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԸ ՉԿՈՐՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏՈՂ ԳՐԱՆՑՎԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Իզաբելա Հովհաննիսյանի ներկայացմամբ քննարկվեց ընտանեկան նպաստը չկորցնելու համար նպաստառուների՝ որպես աշխատող գրանցվելուց խուսափելու հարցը: Քննարկվեց նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նպաստառուների չափորոշիչների վերանայման, մասնավորապես՝ նպաստառուի աշխատանքի ընդունվելուց հետո մինչև 6 ամիս նպաստ ստանալու հնարավորությունը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Գործարարության աջակցման գրասենյակին՝ նպաստառուների կողմից աշխատանքի անցնելու և կայուն եկամուտ ձևավորելու արդյունավետ անցման տարբերակների մշակման նպատակով ուսումնասիրել միջազգային փորձը (ժամկետ՝ 1 ամիս):

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հաջորդ ենթախորհրդի նիստը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի 6-ին, ժամը 14 :00: Հաջորդիվ ենթախորհրդի կազմի պարբերական հանդպումները միտված են լինելու ոչ միայն խնդիրների բարձրաձայնմանը և լուծման տարբերակների մշակմանը, այլ նաև այս հարթակի մասնակիցների համատեղ աշխատանքի շնորհիվ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ նախաձեռնությունների իրականացմանը:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Վ.ՔԵՐՈԲՅԱՆ